մեր վերոյիշեալ աշխատութեան մէջ(*)։ Գանձերից առանձին նշանակութիւն ունին երկուսը հայ ազգագրութեան և արուեստի պատմութեան համար, մէկը «վա․ ճնութե․ Նոր գրոց», միւսը «պատկերաց»։ Առաջինը



Պատկեր 164.

կապուած էր Նորա կողմից Մաշտոցի մէջ մտցրած յատուկ կանոնի հետ(**). «Կանոն Նորակերտ գիր ճենելոյ» գլխաւոր աղօթքը Մխիթարի անունով է. պէտք է ենթադրել, որ ամբողջութիւնը Նորա կազմածը պիտի լինի, որ շատ չէ տարածուած ձեռագիրների մէջ. «Աղթք․ զոր արրլ․ է Մխիթար վրդպի․ Այրիվանեցոյ». սկս․ «Տր․ ԱՃ ամենակալ, հզօր եւ կարող յամենայնի», ուր յայտնուած է հեղինակի եւ ժամանակակիցների հայեացքը գրքի նշանակութեան մասին. ապա խնդրում է օրհնել «զնիւթ մելանիս եւ գգրչութի․ գրչիս», «զտացողս եւ զգրօղս, զկազմօղս եւ զխնամօղս», «զնիւթ կտաւոց եւ փարշամակաց սոցա», «զտախտակ տաւիս եւ պահարանին», «զկաշի կազմի սորա եւ զսեկ չարազուրի», «զնիւթ պղնձոյ, զմարգարտաց՝ արտաքին զարդու», «եւ արձանացիր ի վերա ադիւսաձեւ սափրիս» (ספר – սէֆէր, սոփերք = գիրք)։ Գանձն սկսում է «Մեծապայծառ

---

(*) Մխիթար Այրիվանեցի եւ Նորագիւտ երկեր, եր. 5-8։

(**) Ձեռ. էջմ. № 3987. 228ա.։